ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ANAHIT MELKUMYAN

EMPLOYMENT NEW TECHNOLOGIES IN THE REPUBLIC OF ARMENIA

Key Words: *information technologies, on-line labour market, labour leasing, green economy*

The online labour market development problems in the RA and other countries are considered in the article. Particularly, the implementation of new technologies of employment in USA is considered including the on-line gig-economy and crowdsourcing.

Simultaneously the opportunities for the new technologies of employment in the RA are discussed including labour leasing and green jobs creation.

ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *պարտքային անվտանգություն, գլոբալ ճգնաժամ, արտաքին պարտք, պարտքային կայունության ցուցանիշներ, տնտեսական աճ*

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներից մեկը պետական պարտքի ավելացումն է գլոբալ մասշտաբով: Բացառություն չէր նաև Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ պետական պարտքը 2009–2016 թթ. ավելացել է մոտ 2.3 անգամ, որը պարտքային անվտանգության գնահատման հիրաժեշտություն է առաջադրում: Հոդվածում դիտարկվել են ՀՀ պետական պարտքի ներկայիս վիճակը և դրա ազդեցությունը երկրի տնտեսական զարգացման վրա:

Երկար կյանք ու արևշատություն ցանկանանք մեր պատանիներին, քանի որ հենց նրանք են ժառանգելու մեր պետության ունեցած արտաքին պարտքը

Հ. Հուվեր

21-րդ դարի ամենաարդիական խնդիրներից մեկը համաշխարհային մաշտաբով պետական պարտքի կտրուկ աճն է: Պարտքային ռիսկերը զգալիորեն սրվեցին գլոբալ ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ: Ըստ փորձագիտական գնահատականների՝ 2017 թ. աշխարհի շուրջ 80 երկրում առկա են պարտքային ճգնաժամի մեջ հայտնվելու ռիսկեր[1]:

[1] http://jubileedebt.org.uk/press-release/global-debt-crises-threats-increase-across-world

Ազգային տնտեսության պարտքային կայունությունը կամ պարտքային անվտանգությունը ֆինանսական անվտանգության կարևորագույն տարրերից է: Պարտքային անվտանգությունը փոխառությունների այնպիսի մակարդակ է, որի դեպքում երկիրն ի վիճակի է ապահովելու ֆինանսական համակարգի և ամբողջ տնտեսության կայուն գործունեությունը, միաժամանակ երաշխավորել պետական փոխառությունների արդյունավետ օգտագործում, պարտքի ժամանակին վճարում (ինչպես մայր գումարի, այնպես էլ տոկոսավճարների), թույլ չտալ պարտքային բեռի կրիտիկական կուտակում, պահպանել ֆինանսական սուվերենությունը, տնտեսական և քաղաքական անկախությունը[1]:

Պետական պարտքը բեռ է, սակայն այն կարող է որպես ցատկահարթակ ծառայել տնտեսական լուրջ հաջողությունների համար: Կարևոր է ոչ միայն պարտքի բացարձակ մեծությունը, այլ այն, թե պարտքն ինչպես է օգտագործվում, ինչ ուղղություններով և ինչ մեխանիզմներով է ծածկվում:

Տնտեսագիտության տեսությունը սոցիալապես օպտիմալ պարտքի մակարդակի սահմանման շատ քիչ գործառնական ցուցումներ է առաջարկում: Չկա «անվտանգ պարտք» հասկացության ճշգրիտ սահմանումը, հետևապես՝ գոյություն չունի նաև դրա հստակ գնահատման համակարգ: Միջազգային ֆինանսական կազմակերպությունները մշակել են պարտքային կայունության գնահատման սահմանային ցուցանիշներ (արտաքին պարտքի ՀՆԱ/ՀՆԱ, արտաքին պարտքի ՀՆԱ/արտահանում, արտաքին պարտքի սպասարկում/արտահանում, տոկոսավճար/արտահանում): Լայնորեն կիրառվող սահմանային ցուցանիշներն արտաքին պարտքի վիճակի պայմանական ցուցիչներ են և թույլ են տալիս միայն կողմնորոշվել՝ որն է պարտքի ընդունելի մակարդակը: Որքան փաստացի ցուցանիշները փոքր են սահմանայինից, այնքան փոքր է երկրի՝ պարտքային ճգնաժամում հայտնվելու ռիսկերը: Սակայն, պետք է նշել, որ այդ ցուցանիշները չեն ընդգրկում երկրի պարտքային վիճակի բոլոր ուղղությունները: Անհրաժեշտ է հաշվի առնել փոխառու երկրի առանձնահատկությունները, մասնավորապես՝ տնտեսական ներուժը, արտաքին տնտեսական հնարավորությունները, հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականությունները և այլն: Տնտեսական պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ թույլ ցուցանիշներ ունեցող երկրները կարողացել են դուրս գալ բարդ իրավիճակից և հակառակը՝ բավարար ցուցանիշների պայմաններում հայտնվել են բարդ իրադրության մեջ:

Միջազգային պրակտիկայում պարտքի վտանգավորությունը գնահատելու համար առաջին հերթին օգտագործում են պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: Վերջին տարիներին բազմաթիվ զարգացած երկրներում այդ հարաբերակցությունը գերազանցում է պարտքային կայունության տեսանկյունից կրիտիկական համարվող 60%-ի շեմը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներից մեկը պետական պարտքի ավելացումն է գլոբալ մասշտաբով: Բացառություն չէր նաև Հայաստանի Հանրապետությունը: Բացասական փոփոխությունների են ենթարկվել ինչպես պարտքի ծավալները, այնպես էլ կառուցվածքը: Այսպես՝ ՀՀ պետական պարտքը 2009–2016 թթ.

[1] Кульков В. М., Долговая безопасность экономики России: параметры и противоречия, 2014, с. 42.

ավելացավ մոտ 2.3 անգամ. եթե 2009 թ. այն կազմում էր 1276 մլրդ դրամ (ՀՆԱ 40.6%-ը), ապա 2016 թ.՝ 2876 մլրդ դրամ (ՀՆԱ 56.6%-ը): Ընդ որում, պետական պարտքը մի քանի անգամ ավելի արագ է աճում, քան տնտեսությունը:

2017 թ. ՀՀ պետական պարտքն արդեն հատել է 6 մլրդ դոլարի շեմը, սեպտեմբերի վերջին այն կազմել է 6.308 մլրդ ԱՄՆ դոլար՝ տարեսկզբի համեմատությամբ ավելանալով 365.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 5.8%-ով[1]: Պետական պարտքի 80.3%-ը արտաքին փոխառություններն են (5.067 մլրդ ԱՄՆ դոլար), ներքին պարտքը 1.240 մլրդ ԱՄՆ դոլար է: Ակնհայտ է, որ ավելացել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պարտքը:



Գծապատկեր 1. ***ՀՀ պետական պարտքը 2006–2016 թթ.***[2]

ՀՀ պետական պարտքի մասին օրենքը որոշակի սահմանափակում է դնում կառավարության պարտքի մեծության վրա: Այն չպետք է գերազանցի ՀՀ նախորդ տարվա ՀՆԱ 60%-ը: 2017 թ. սեպտեմբերին կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ 53.6%-ը: Մինչև 2015 թ. այս սահմանափակումը վերաբերում էր պետական պարտքին, որը ներառում է նաև կենտրոնական բանկի պարտքը: Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2017 թ. սեպտեմբերին կազմել է նախորդ տարվա ՀՆԱ 59.4%-ը: Փաստորեն, օրենքում կատարված փոփոխությունները կառավարությանը լրացուցիչ պարտք ներգրավելու հնարավորություն են ընձեռել:

Պետական պարտքի ծավալների աճն իր հերթին զսպում է տնտեսական աճը: ՀՀ արտաքին պարտքի՝ պետական բյուջեի վրա ունեցած ազդեցության գնահատումներում հիմք է ընդունվում, որ լրացուցիչ 1 մլրդ դոլար պետական պարտքի ներգրավման պարա-

[1] ՀՀ պետական պարտքի ամսական տեղեկագիր - 30.09.2017 http://minfin.am/hy/page/amsakan_vichakagrakan_teghekagrer/

[2] Ըստ ՀՀ ՖՆ և ԱՎԾ տեղեկագրերի:

գայում ՀՀ արտաքին պարտքի 10 տոկոսային կետով ավելացումը հանգեցնում է տնտեսական աճի տեմպերի նվազմանը 0.5 տոկոսային կետով[1]:

ՀՀ պետական պարտքի կառուցվածքը բացասական փոփոխության է ենթարկվել՝ պայմանավորված արտոնյալ վարկերի նվազմամբ և առևտրային վարկերի ավելացմամբ: Եթե 2013 թ. առևտրային վարկերի տեսակարար կշիռը կազմել է 26.4%, ապա 2016 թ. տարեվերջի դրությամբ՝ 36%: Ի դեպ, ՀՀ-ը պարտքային խնդիրներ ունեցել է նաև 1999–2001 թթ., երբ ստիպված եղավ վերաձևակերպել առևտրային պայմաններով տրամադրված ռուսական և թուրքմենական վարկերը: Սա այն դեպքում, երբ պետական պարտքը չէր գերազանցում ՀՆԱ 47%-ը:

2016 թ. ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճարները կազմել են 98.27 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 32.7%-ով: Արդյունքում սպասարկման ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում աճել է 1.5 տոկոսային կետով՝ 2016 թ. կազմելով 6.8%: 2016 թ. պետական պարտքի սպասարկմանն ավելի շատ միջոցներ են ուղղվել, քան առողջապահության ոլորտին (81.94 մլրդ դրամ): Ըստ 2018 թ. պետական բյուջեի նախագծի՝ ՀՀ պետական պարտքի սպասարկմանը կուղղվի 140.5 մլրդ դրամ: Փաստորեն, հաջորդ տարվա տոկոսավճարների գծով վճարումները կգերազանցեն նաև կրթությանը հատկացվող միջոցները (127.1 մլրդ դրամ)[2]:

Այսպիսով՝ վերջին տարիներին պետական պարտքի աճի բարձր տեմպերը մտահոգիչ են: Կարծում ենք՝ ՀՀ պետական պարտքն անցել է այն շեմը, որից հետո բացասական ազդեցություն է ունենում տնտեսության վրա: Պարտքի սպասարկման նպատակով ավելի մեծ ծավալի միջոցներ են հատկացվում պետական բյուջեից, որոնք կարող էին ուղղվել տնտեսության առանցքային ոլորտների զարգացմանը: Հետևապես՝ կառավարությունը պետք է միջոցներ ձեռնարկի պետական պարտքի ծավալների կայունացման, դրա կառուցվածքի օպտիմալացման, ինչպես նաև վարկային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ШУШАН МОВСИСЯН

ПРОБЛЕМЫ ДОЛГОВОЙ БЕЗОПАСНОСТИ ЭКОНОМИКИ РА

Ключевые слова: *долговая безопасность, глобальный кризис, внешний долг, показатели устойчивости долга, экономический рост*

Одним из последствий глобального финансово-экономического кризиса является увеличение государственного долга в глобальном масштабе. Республика Армения не стала исключением. Государственный долг Армении за 2009-2016 гг. увеличился примерно в 2,3 раза, что выдвигает необходимость оценки долговой безопасности. В статье рассмотрено нынешнее состояние государственного долга РА и его влияние на экономическое развитие страны.

---

[1] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2013/07/Nrq114.pdf

[2] ՀՀ օրենքը ՀՀ 2018 թ. պետական բյուջեի մասին:

SHUSHAN MOVSISYAN

DEBT SAFETY ISSUES OF RA ECONOMY

Key words: *debt safety, global crisis, external debt, debt sustainability indicators, economic growth*

Public debt has increased sharply in many countries after global financial and economic crisis. Armenia was not an exception. In 2016 public debt of the Republic of Armenia has increased 2.3 times compared to 2009, which raises the need to assess debt safety. Current state of the public debt of Armenia and its impact on economic development of the country is considered in the article.

ՄԱՔՍԻՄ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *բարձրագույն մաթեմատիկա, տնտեսագիտական բուհ, դասընթացի բարեփոխում*

Հետազոտության մեջ հիմնավորվում է, որ ներկայումս տնտեսագիտական բուհերում կարդացվող բարձրագույն մաթեմատիկայի դասընթացը կարիք ունի լայնածավալ բարեփոխումների՝ թե՛ բովանդակության, թե՛ մեթոդաբանության առումներով: Հիմնարար գաղափարների հստակ և մատչելի ներմուծումից հետո չպետք է հրապուրվել դրանց մաթեմատիկական խորացման հարցերով, այլ հարկ է կենտրոնանալ տարբեր տեսանկյուններից (առաջին հերթին՝ տնտեսագիտական) դրանց մեկնաբանության և պարզաբանման վրա: Բարեփոխման հիմքում դրված կարևոր սկզբունքներից մեկը պետք է լինի մաթեմատիկական հիմնարար հասկացությունների, դասական թեորեմների, համընդհանուր ճանաչված եզրույթների անաղարտությունը, դրանց հստակ և տրամաբանական մատուցումը:

Բարձրագույն մաթեմատիկայի դասընթացը, որն այժմ կարդացվում է հետխորհրդային տարածքի գրեթե բոլոր բուհերում, ձևավորվել է անցյալ դարի 20–30-ական թվականներից էլ առաջ: Ի սկզբանե դասընթացը նախատեսված էր տեխնիկական բուհերի համար և ընդգրկում էր հիմնական մաթեմատիկական գիտությունների՝ անալիտիկ երկրաչափության, գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի և դիֆերենցիալ հավասարումների մի շարք թեմաներ: Այդ դասընթացը, չնչին փոփոխություններով, այժմ էլ կարդացվում է հետխորհրդային գրեթե բոլոր, այդ թվում՝ ՀՀ տնտեսագիտական բուհերում: